№ 7 Յունվարի 19 (31) 1882 Յունվարի 19 (31) № 7

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր անընդունակութիւն։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Գերմանիա։ Նամակ Պարսկաստանից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Թիւրքիայից։

ՄԵՐ ԱՆԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

—

Երբ որ հայը կարդում է մի յօդուած որ յարձակվում է մի համալսարանական անանձնիւ վարմունքի դէմ, կամ մի հաստատութիւնի, մի շահասէր վաշխառուի դէմ,—հայը անպատճառ սկսում է ձեզ քարոզ կարդալ թէ ձեր արածը անտակու�թիւն է, թէ մարդկերանց չէ կարելի դրբատել՝ մարակելով, իրանից յետ մղելով նրանց, այլ նրանց գրաւելու, նրանց իրանց պակասութիւններից ուղղելու համար, պէտք է մեղմութեամբ, քաղցրութեամբ, խոհեմութեամբ վարվել նրանց հետ։ Եւ հայը անպատճառ կաւելացնի այսպիսի խօսքերը. մանաւանդ չը պէտք է յարձակվել հարուստների վրա, որովհետև նրանք կարող են պէտք գալ մեզ, կարող են հարկաւորվել իրանց հարստութեամբ ընդհանուր ազգային գործերին։

Հայը, որ իրան ցոյց է տալիս այդ տեսակ դիպուածներում խոհեմ, զգոյշ, հեռատես, ուրիշ դիպուածներում, որտեղ ճշմարիտ հարկաւոր է զգուշութիւն, խոհեմութիւն, հեռատեսութիւն,—յանկարծ մոռանում է իր առաջվայ վարդապետութիւնը և դառնում է անզգոյշ, անտակտ, անհեռատես։

Մի անաղնիւ մարդ, մի հարստահարող երբէք ոչ ոքին պէտք չեն կարող գալ, այդ տեսակներին պէտք է հարուածել, մարակել, քանի որ նրանց արածը անբարոյականացնում է հասարակութիւնը։ Բայց որտեղ ճշմարիտ հարկաւոր է գրաւել, սիրով, խոհեմութեամբ և հեռատեսութեամբ վարվելով, այնպիսի ազգային տարրերը, որոնք անշուշտ ժամանակով պէտք կը գան ամբողջ ազգութեանը,—այդ դիպուածներում հայը մոռանում է իր քարոզած քաղցրութիւնը, սերը, մեղմութիւնը, խոհեմութիւնը, զգուշութիւնը և հեռատեսութիւնը։

Թիւրքաց Հայաստանի սովի ժամանակ Խրիմեան հայրիկը միակ մարդ էր, որ նիւթապէս անխտիր օգնում էր ոչ թէ միայն այլ և այլ կրօնքներին պատկանող հայերին, բայց և հայաստանցի թիւրքերին, ասորիներին, քիւրդերին։ Դրանով նա գրաւեց ամենքի սերը և այդ սերը, եթէ հայրիկի օրինակին կը հետևեն, գրաւական կը լինի որ հայաստանցի այլացեղ ազգութիւնները կը մոռանան իրանց ատելութիւնը դէպի հայերը և ընդհակառակն կը սիրեն հայերին։

Նոյն ուղղութեանը իր գործունէութեան մէջ հետևում էր միշտ և ներսէս պատրիարքը։

Իսկ մենք ինչպէս ենք վարվում նոյն իսկ մեր կրօնաբաժան եղբայրների հետ։

Երևակայեցէք ձեզ որ հիմնվել է Մոսկվայի բարեգործական ընկերութիւնը։ Ընկերութեան խորհրդի անդամներին ներկայանում է մի չքաւոր հայ ուսանող, դիցուք Պետրոսեան կամ Վարդանեան ազգանունով, խնդրելով որ ընկերութիւնը օժանդակի նրան, տալով մի տաս կամ տասն և հինգ ռուբլ ամիսը։ Խորհրդի անդամները սիրով ընդունում են երիտասարդին, խոստանում են նրան օգնութիւն, բայց յանկարծ իմանում են որ այդ Պետրոսեանը կամ Վարդանեանը լուսաւորչական չէ, այլ կաթոլիկ է, կամ բողոքական,—և ահա նրանք կանոնադրութեան համեմատ մերժում են նրան իրանց խոստացած նիւթական օժանդակութիւնը։

Ինչպէս՞ Էք կարծում, ինչ զգացմունք պէտք է ծնվի երիտասարդի մէջ։ Բնականապէս նրա մէջ պէտք է ծնվեն հետևեալ մտքերը։ «Ես ինձ հայ էի համարում, ես լեզուով, ցեղով, ոգով, գաղափարներով հայ եմ, բայց եթէ դուք ինձ հայ չէք համարում, եթէ լուսաւորչական չը լինելու պատճառով ես պէտք է քաղցած մեռնեմ, չը պէտք է շարունակեմ իմ համալսարանական ուսումս, ուրեմն ես ինքս էլ այսուհետև ինձ հայ չեմ կամենում համարել։»

Հայը որ առհասարակ իրան ուզում է ցոյց տալ խոհեմ և հեռատես, ցոյց է տալիս այդ յատկութիւնները որտեղ հարկաւոր չէ, իսկ որտեղ հարկաւոր են այդ յատկութիւնները, որտեղ պէտք է գրաւել դէպի ազգային գաղափարը մեր կրօնաբաժան եղբայրներին, նրանց անդադար „երկեսով չը տալով“ թէ դու հայ չես, որովհետև լուսաւորչական չես, որտեղ պէտք է ամեն կիրք, մոլեռանդութիւն և նախապաշարմունք զոհել յօգուտ ազգային գաղափարի,—այդտեղ հայը յանկարծ մոռանում է իր խոհեմութիւնն ու հեռատեսութիւնը և արուեստական կերպով իրանից, ազգային ամբողջութենից յետ է մղում նոյն ազգի, թէև ուրիշ կրօնին պատկանող զաւակներին, ծնեցնելով նրանց մէջ ատելութեան զգացմունքը դէպի մեծամասնութիւնը և այսպիսով վնասելով ազգային միութեան և ազգային ամբողջութեան գաղափարին։

Բայց թող չը վհատվեն մեր կաթոլիկ և բողոքական եղբայրները. եթէ նրանց դէմ է ազգի խաւարասէր, յետադէմ մասը, հին սերունդը, ուրիշ կողմից նրանց հետ է ազգի ազատամիտ ահագին կուսակցութիւնը, որին և պատկանում է ապագան և որ իր դրօշակի վրա գրած ունի՝ „կրօնի համբերողութիւն, մտքերի և համոզմունքների ազատութիւն, ազգային գաղափարի անունով։“

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Երևան, 1 յունվարի

«Մշակին» Երևանայ հասարակութիւնից։

Երևանայ հասարակութիւնը տասը տարի շարունակ համակրելով «Մշակի» ուղղութեան և հասկանալով այն բոլոր մտքերի և գաղափարների օգտակարութիւնը, որ ազգանուէր «Մշակը» աշխատել է տարածել ժողովրդի մէջ, շնորհաւորում է նորա տասնամեայ տարեդարձը և ցանկանում է, որ նա նոյն ուղղութեամբ և իրեն յատուկ հաստատ քայլերով շարունակէ այն սուրբ գործը, որին նա նուիրել է իր բոլոր ոյժերը։

Կեցցէ ազգային «Մշակը» շատ տասնեակներ։

Սառարդրեցին 178 անձինք։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այս օրերս մենք ստացանք ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ հայոց հասարակութենից «Մշակի» տասնամեայ տարեդարձի առիթով մի թանգագին ընծայ, մի գեղեցիկ արծաթեայ գրչակոթ, փետուրի գրչի ձևով չինած, որի վրա փորագրված են հետևեալ խօսքերը։ «1872—1882, Նոր-Նախիջևան «Մշակին»։» Այդ ընծան մենք կը պահպանենք որպէս մի թանգագին յիշատակ Նոր-Նախիջևանի հայոց հասարակութեան համակրութեան դէպի մեր տասնամեայ համեստ գործունէութիւնը։ Այս տողերը մենք գրում ենք նոյն իսկ այս գրչով։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են։ «Գաւառապետի պաշտօնակատար Շահխաթունեանցի չնորհիւ մեղանում կարգ ու կանոն է տիրում։ Մեծ յոյս ունենք նոյնպէս նորընտիր գեղուքում ժողովի որ գիւանը և որ ատեանը կուզէ լինի, նա պիտի պատրաստ մնայ այնպիսի պատասխաններ ընդունելու, որը ստանալու և լսելու դառն օրինակը տեսաւ գոնէ այս անգամ....

Այսպէս է այս կ. պօլսեցոց բանը. կարհամարեն գաւառացիներին, նոցա գրպանը սակայն դարդակելով, կարհամարեն ռուսահայերին, չողոքորթելով նոյն շահախնդրական նպատակներով, իսկ երբ որ հարկաւոր կը լինի խորհուրդներ լսել և կատարել, այդ ժամանակն էլ իրանց «ամենահմաստուն» և «ամենագէտ» կը կարծեն։ Թող խրատվեն հիմա, զօրով ենթարկվելով համ գաւառացոց կամքին, համ ռուսահայոց դիտողութիւններին....

Քաղաքականութեան մէջ ոչինչ նորութիւն, բացի Գերմանիայի ազդեցութիւնը Թիւրքիայում մեծանալուց։ Զուր չէ նկատում Ամեդէ Տիերրին իր պատմութեան մէջ թէ՝ Բիւզանդիոն ասված տեղը խորամանկութեանց և ինտրիգների ծնընդավայրն է. ինչպէս որ հին Բիւզանդիոնը իր գոյութիւնը մի երկու հարիւր տարի երկարեց, դիմելով դանաղան խորամանկութեանց, այնպէս էլ վարվում է Բիւզանդիոնը յաջորդած Ստամբուլը։ Ապացոյցը տեսնում էք Թիւրքիայի վրա, որը զրկվելով գրեթէ իր բոլոր ներքին և արտաքին ուժից, սակայն խաղացնում է Եւրոպան ամենափառաւոր կերպով։ Թէ ինչ ասել է քսքսվիլ Գերմանիային այսպիսի արտասովոր ակնածութեամբ, դժուար չէ հասկանալ, երբ մի այդպիսի քայլով կարելի կը լինի ջլատել Արևելքում համ Անգլիայի շահերը, համ Ֆրանսիայի, համ Ռուսիա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 28 դեկտեմբերի 81.

Կ. Պոլսի ազգային ժողովը բաւական յիշեցնում է Մօնակօյի թագաւորութիւնը, որի զօրքը պատերազմական դրութեան ժամանակ հաղիւ հասնում է երեսուն հոգու, բայց չը նայելով դորա այդ միլիոնների թագաւորը թղթի վրա ունէ մի կազմակերպված մեծ տէրութեան բոլոր մասնաճիւղերը, քաղաքական թէ զինուորական։ Օրինակ, թղթի վրա նա ունէ իր մարաջախտները, իր մինիստրները, իր պալատական բոլոր անդամները, իր բիւջեաը, իր բոլոր «պետական» արտաքին և ներքին պերօգատիւները։ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի դանաղան «դիւանների», «ատեանների», «խորհրդարանների» «քուէարկութիւնների», «հարցաքննումների» և այլն արարողական խեղկատակ բաների վրա մտածած ժամանակ, նոյն լիլիպուտթագաւորութիւնն է մարդու միտը դալիս։ Բայց ոչ ոք չը կայ այդ «ազգային» ժողովի մէջ, որ վերկենայ ու ասէ մի օր. «այ ողորմելի արարածներ, երբ պիտի ձեռք քաշէք այդ ծաղրալի և պամպուլական հոսոսութիւններից ու նայէք ձեր ըստանձնած գործին քիչ գործնական և աղգաշահական կողմից։» Թողնենք դեռ հաղար ու մէկ անելիք, որոնց կարօտութիւն ունէ հայրենիքը և նոյն իսկ ինքը Կ. Պոլսի հայ ազգաբնակութիւնը, վերառնենք միայն այն, որ ժամանակ է մտածելու այնպիսի մի կազմակերպութիւն տալու վրա, որով մի կողմից այդ քսանումէկ տարվայ մեռելածին ժողովը համազգային լինի, գտնէ իր «դիւանների» վերաբերմամբ, միւս կողմից էլ որոնել այնպիսի գործնական միջոցներ, որոնցով ժողովի նշանակութիւնը ազգի անդամների համար չը լինի ֆիկտիվ և մնոտի, այլ ունենայ իսկապէս ազգային ընդհանրութեան անունին արժանի մի հեղինակաւոր բան։ Սորա համար ամենից առաջ ի հարկէ ամբողջ 140 երեսփոխանների մէջ պիտի գտնել այնչափ հայրենասիրութեան գաղափար, որով յետ քաշվին հրապարակից զանազան ղրուշական բաղդախնդիրներ, առաջ քաշելով նոցա տեղ աւելի թարմ և գործնական գաւառական տարր։ Բայց միթէ դրանով ամեն բան կարող է կատարված համարվել, միթէ դրանով իրաւունք կը ստանայ այդ հաստատութիւնը «ազգային» ասվելու....

Ի միջի չատ խեղկատակութիւնների, այս քանի օրերս ես ինքս ինձ վրա փորձեցի այդ ժողովի մի անհեթեթ անտրամաբանութիւնը՝ Կ. Պոլսի ազգային ժողովը չընդունելով ոչ մի դիտողութիւն ռուսահայերից, սակայն իր դարդակ ինքնահաւանութեան մէջ այնչափ մոռանում է իրան, որ ռուսահայերին ևս ենթարկելի է կարծում իր իրաւասութեան։ Դորա ապացոյցը կարող է լինել այն կրկնակի հրաւէրագիրը, որով Ստեփան Փափազեան ասված ձեղ յայտնի սրիկայի զանդատին համեմատ ինձ վրա, ժողովի չը գիտեմ որ ատեանը դատի է հրաւիրում ձեր աշխատակցին։ Այո, իւրաքանչիւր ժողով, լինի նա պաշտօնական ձևեր պահպանող, թէ կազմված հէնց մի քանի ազգայիններից ինքնագլուխ կերպով, այդպիսի մի համարիւնների խումբ պիտի միշտ յարգած, բայց երբ իր ամենաէական ազգային պարտաւորութիւնները զոհելով լոկ արտաքին ձևապաշտական միմսուութիւններին, ամբողջ քսան և մէկ տարի դրանով միայն ժամանակ կանցնեն և երբէք էլ չեն մտածի ուշադրութեան առնել հարիւր կողմից իրանց կրկնվող բարի խորհուրդները, այդպիսի մի ժողովի հրաւէր փոխանակ յարգվելու, բնական է որ ուր պիտի ուղարկվեր....

Ահա մի դէպք, երբ «հարցաքննումներով» պարապվող պոռոտախօսները կարող էին մտածել մի այնպիսի համազգային նշանակութիւն տալ այդ «ազգային» ժողովին, լայնացնելով նորա կանոնադրութիւնը, որով մի կողմից ռուսահայերը կարող լինեն մասնակցել ժողովի գործերին, միւս կողմից էլ ընկած տեղը նմանապէս ենթարկվեին նորա իրաւասութեան։ Այսպիսի մասնակցական իրաւունք ի հարկէ կարելի կը լիներ տալ գտնել այն ռուսահայերին, որոնք ապրում են Կ. Պոլսում և ընդհանրապէս Ցաճկաստանի մէջ, մի քանի հաղար թուով։ Դորանով կարելի կը լիներ մի կողմից համերաշխական մի նոր կապ կայացնել երկու կողմի հայերի մէջ, միւս կողմից էլ կարելի կը լիներ ժողովի կրօնական և քաղաքական դիւանների իրաւասութեան ենթարկել այն ռուսահայերին, որոնց պատահում է գործ ունենալ տաճկահայերի հետ։ Քանի որ այդպիսի մի յառաջադիմական բարեփոխութեանց վրա ոչ ոք կամք չունէ մտածելու, ի հարկէ այդպիսի դէպքում ժողովի որ գիւանը և որ ատեանը կուզէ լինի, նա պիտի պատրաստ մնայ այնպիսի պատասխաններ ընդունելու, որը ստանալու և լսելու դառն օրինակը տեսաւ գոնէ այս անգամ....

Այսպէս է այս կ. պօլսեցոց բանը. կարհամարեն գաւառացիներին, նոցա գրպանը սակայն դարդակելով, կարհամարեն ռուսահայերին, չողոքորթելով նոյն շահախնդրական նպատակներով, իսկ երբ որ հարկաւոր կը լինի խորհուրդներ լսել և կատարել, այդ ժամանակն էլ իրանց «ամենահմաստուն» և «ամենագէտ» կը կարծեն։ Թող խրատվեն հիմա, զօրով ենթարկվելով համ գաւառացոց կամքին, համ ռուսահայոց դիտողութիւններին....

Քաղաքականութեան մէջ ոչինչ նորութիւն, բացի Գերմանիայի ազդեցութիւնը Թիւրքիայում մեծանալուց։ Զուր չէ նկատում Ամեդէ Տիերրին իր պատմութեան մէջ թէ՝ Բիւզանդիոն ասված տեղը խորամանկութեանց և ինտրիգների ծնընդավայրն է. ինչպէս որ հին Բիւզանդիոնը իր գոյութիւնը մի երկու հարիւր տարի երկարեց, դիմելով դանաղան խորամանկութեանց, այնպէս էլ վարվում է Բիւզանդիոնը յաջորդած Ստամբուլը։ Ապացոյցը տեսնում էք Թիւրքիայի վրա, որը զրկվելով գրեթէ իր բոլոր ներքին և արտաքին ուժից, սակայն խաղացնում է Եւրոպան ամենափառաւոր կերպով։ Թէ ինչ ասել է քսքսվիլ Գերմանիային այսպիսի արտասովոր ակնածութեամբ, դժուար չէ հասկանալ, երբ մի այդպիսի քայլով կարելի կը լինի ջլատել Արևելքում համ Անգլիայի շահերը, համ Ֆրանսիայի, համ Ռուսիա-

տատների, Յովհաննէս Բաբայեանի և Յարութիւն Պարսամեանի ջերմեռանդ աշխատութեան վրա յօգուտ քաղաքիս բարեշատութեան: Այժմ ընդհանրապէս մթերքների արժանութիւն և առատութիւն կայ: Դժբաղդաբար գաւառումս չարունակում է տիրել դիֆտերիտը և շատ զոհեր է անում: Այդ հիւանդութեան պատճառով ուսումնարանները ևս երկար արձակուրդներ ստացան: Այստեղ սաստիկ ցրտեր է անում:»

—

Յունվարի 16-ին, շաբաթ օրը, «Մշակը» ունէր արդէն 1000 բաժանորդ, առանց հաշուելու հատով ծախված համարները, այն ինչ անցեալ 1881 թվին յունվարի 15-ին կամ 16-ին մենք ունէինք ընդամենը 800 բաժանորդ:

—

«Մշակի ներկայ համարում տպվող Երևանի հայ հասարակութեան կողմից մեր անունով ուղարկած շնորհաւորական ուղերձը, ստորագրված է 178 ստորագրութեամբ, Երևանի յայտնի ընտանիքներին պատկանող երկու սեռի անձինքներով և քաղաքի մէջ ամենանշանաւոր հասարակական դիրք ունեցող պարոններով: Ստորագրողների թւում մենք տեսնում ենք կալուածատէրեր, բժիշկներ, աղվօկատներ, քաղաքային և պետական պաշտօնեաներ, վաճառականներ, մանկավարժներ, բազմաթիւ կանայք և օրիորդներ: Այդ տեսակ համակրութիւնը բուն հայոց քաղաքի կողմից մեզ անչափ թանդ է:

—

Ստացանք Երևանից բժիշկ Լևոն Տիգրանեանից 8 ռուբլ բաժանորդագին «Ժուրնալ դ'Օրիանի» համար: Նախկին փողի հետ կանի 710 ռուբլ:

—

Ստացանք անյայտ մի պարոնից «Ժուրնալ դ'Օրիանի» համար 5 ռուբլ բաժանորդագին: Առաջվայ փողի հետ կանի 715 ռուբլ:

—

Յօգուտ Կ. Պոլսի որբանոցի ստացանք Բագուից, պ. Յովհաննէս Հալաբեանից 10 ռուբլ:

—

Պ. Ալէքսանդր Մէլիք-Շահնազարեանց գրվելով «Մշակին» մի և նոյն ժամանակ ուղարկում է մեզ 3 ռուբլ խնդրելով որ գործ դնենք այդ փողը մի որ և է աղքատ հիմնարկութեան մեր կամքին համեմատ: Պարոնը գրում է՝ «Ի պատիւ «Մշակի» անձնուէր գործունէութեան և նրա տասնամեայ յոբելեանի առիթով, որքան կենդանի կը լինեմ, իւրաքանչիւր տարի յանձն եմ առնում յունվար ամսին այդ 3 ռուբլ ուղարկել խմբագրութեան տնօրինութեանը:» Այս տարի մենք յատկացնում ենք պ. Մէլիք-Շահնազարեանի նուէրը Կ. Պոլսի որբանոցին:

—

Շատերը մեր քաղաքի բաժանորդներից գանգատվում են թէ մեր լրագրի ցրվողները ճիշդ կերպով չեն հասցնում «Մշակը» նրանց տները: Մենք չենք հերքում որ շատ անգամ մեր ցրվողները կարող են անճիշդ լինել, բայց նոյն իսկ նրանց վրա հսկելու համար, թող իրանք բաժանորդները խստութեամբ պատուիրեն իրանց ծառաներին որ «Մշակի» համարը ստանալուն պէս հասցնեն իրանց տէրերին: Այս օրերս մենք տեղեկացանք որ մեր ցրվողները մի քանի տները ճշդութեամբ տարան «Մշակի» բոլոր համարները, բայց բաժանորդների տան ծառաները համարները ստանալով քանի մի օր իրանց սենեակում պահեցին, յետոյ պատուեցին և դէն գցեցին, առանց տէրերին հասցնելու, իսկ բաժանորդները մեղադրում են խմբագրութեանը անճշդութեան մէջ: Երբ որ բաժանորդները խստութեամբ կը պահանջեն իրանց ծառաներից լրագրի համարների իրանց ձեռք հասցնելը, դրանով նրանք կը դիւրացնեն մեզ խստութեամբ հսկել և մեր խմբագրական ցրվողների վրա:

—

«Кавказъ» լրագիրը լսել է որ պ. Ց. Փիթոեվ յանձն է առնում Թիֆլիսի թատրոնի անտրեպրիզը և պէտք է իր հաշուով վերանորոգի թատրոնի շինութիւնը: Ասում են որ պարոնը բերել կը տայ ռուսաց օպերական խումբը:

—

Ղզլարխչախից մեզ գրում են: «Շիրակի վիճակում բկացաւը այս տարի սարսափելի կերպով տարածված է և շատ զոհեր է տանում մանուկներից: Այդ հիւանդութեան տարածմանը առաջն առնելու նպատակով տեղիս դաւառապետ պ. Շաղուբաթեան յատուկ կարգադրութիւններ է արել և ինքն անձամբ բժշկի հետ այցելում է իր վիճակը:»

—

Շիրակից մեզ գրում են որ այս տարի սովորականից մի և կէս ամիս վաղ Շիրակի ամբողջ դաշտը ծածկվել է ձիւնով: Դեկտեմբերի վերջերին Խալիֆ-Օղլու մօտ 4 յոյն խեղդվել էին, ձիւնի տակ մնալով սաստիկ մրրկի ժամանակ: Ինչպէս Թղթակիցը գրում է, այս տարի կենսական պիտոյքները շատ առատ են և հետզհետէ էժանանում են Շիրակի վիճակում:

—

ԴԵՐԲԷՆԴԻՑ մեզ գրում են: «Վերջապէս մեր քաղաքի հայ հասարակութիւնը բաղդ ունեցաւ իր թատրոնական սեփական բեմն ունենալ, Ս. Մեսրոպեան ընթերցարանի դահլիճում: Անցեալ տարվայ վերջին ամիսներին արդէն երկու ներկայացումներ եղան: Թատրոնի գործի համար գլխաւոր աշխատողներն են՝ տիկին Թամարա Սառաճեանց, իր երկու օրիորդներով, նոյնպէս տիկին Իշխանեանց և Կ. Մէլիք-Շահնազարեանց: Թատրոնի նպատակն է համ հասարակական կըրթարան լինել, համ էլ ներկայացումներից ստացած արդիւնքով նպաստել Մեսրոպեան դպրոցի և գրադարանի նիւթական դրութեան բարւոքմանը:»

—

ՐՕՍՏՕՎԻՑ պ. Մաղաքեան մեզ գրում է որ անցեալ 1881 թվի մարտ ամսին հրաւէր ստանալով պ. Սիմէօն Սաֆարեանցից, Սուրբ Խաչ քաղաքից, հաւաքեց փող «Էլ իմ Սաղը» վերնագրով գիրքը հրատարակելու համար 11 ռուբլ, իրանից էլ 10 ռուբլ աւելացրեց և այդ 21 ռուբլ յունիս ամսին ուղարկեց պ. Սաֆարեանցին: Բայց մինչև այժմ ոչինչ տեղեկութիւն չունի թէ ինչ եղաւ խոստացված գիրքը, լոյս ընծայվեց թէ ոչ:

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են: «Մի գաղտնի պատճառ կայ ինչի այստեղի նոր հիմնվող «Բարեգործական» ընկերութիւնը մտցրեց իր կանոնադրութեան մէջ միայն հայ-լուսաւորչական խօսքը: Պատճառն այն է, որ Մօսկվայում կան մի քանի հայ-կաթոլիկ ուսանողներ, մանաւանդ Ղըրիմից եկած և ընկերութեան խաւարասէր հիմնողները վախենում են թէ հայ հասարակութիւնից հաւաքվելու փողերի մասը ստիպված չը լինեն որպէս օժանդակութիւն տալ հայ կաթոլիկ ջաղտոր ուսանողներին, եթէ դրէին կանոնադրութեան մէջ հայ խօսք, կամ հայ առանց կրօնի խարութեան, ինչպէս Բագուի Մարդասիրական ընկերութեան մէջ է գրված:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Բերլինում տարածված լուրը սօցիալ-դեմոկրատ կուսակցութեան պատգամաւոր Դիտցին Շտուտգարտի մէջ կալանաւորելու մասին շատ վատ տպաւորութիւն գործեց բոյսստագի մէջ և պատգամաւորներին վրդովմունք պատճառեց: Դիտցի կալանաւորութեան պատճառն այն է, որ նա թոյլ էր տուել իր գրասենեակում Շտուտգարտի մէջ մի օրացոյցի վաճառումն, որ արգելված էր տեղական իշխանութենից: Գերմանական Բոյսստագի պարապմունքների ընթացքում նրա անդամին կալանաւորելը կատարելապէս արգելված է գերմանական օրէնքներով, եթէ մեղաւորը չէ կալանաւորվում յանցանք գործելու ժամանակ: Դիտցի կալանաւորելը իսկապէս սահմանադրութեան զեղծումն է: Այդ կարգադրութեան առիթով սօցիալիստ Կայզեր, առաջադէմ Ռիխտեր և Հենել նշանաւոր ճառեր արտասանեցին: Կայզերի առաջարկութեան համեմատ բոյսստագը վճռեց՝ պահանջել կառավարութենից Դիտցի անյապաղ արձակումն և կանցլերից մեկնութիւններ խնդրել այդ գործի մասին: Մի և նոյն ժամանակ բոյսստագը վճռեց կարգադրել, որ այդպիսի դէպքերում դատարանները կանցլերի միջնորդութեամբ յայտնեն բոյսստագին նրա անդամի կալանաւորութեան լուրը և պատճառները:

Ենթադրութիւն կայ, որ դարնանը գերմանական բոյսստագը կը քննէ հետևեալ երեք օրինագիծները. մշակների ապահովութիւնը, արդիւնաբերական գործունէութեան զարգացումը և ծխախոտի արտօնութեան մտցնելը: Իշխան Բիսմարկ յոյս ունի օգուտ քաղել մինչև անդամ բոյսստագի ընդդիմադրական կուսակցութեան կարծիքներից այդ օրինագիծների մասին, որովհետև պարլամենտական վիճաբանութիւնները կը նպաստեն այդ հարցերի մշակութեանը: Բոյսստագի նախագահը յայտնեց, որ ինքը Իշխան Բիսմարկից մի նամակ է ստացել, որով յայտնվում է, թէ կալանաւորված պատգամաւոր Դիտց յունվարի 14-ին արձակված է Շտուտգարտի բանտից:

Բոյսստագի նիստերից մէկի ժամանակ քննվեցաւ պատգամաւոր Հերտլինգենի հարցը գործարանական այժմեան օրէնքների զարգացման մասին: Իշխան Բիսմարկ պատրաստականութիւն յայտնեց անյապաղ պատասխանել այդ հարցին, որ Հերտլինգեն արտայայտեց մի երկար ճառով: Ճառախօսը մերժում էր թէ սօցիալական և թէ կոմունիստական պետութիւնը, նոյնպէս և այն վարդապետութիւնը, որ ամեն բան թողնում է իր բնական ընթացքին: Նրա կարծիքով, հարկաւոր չէ ոչ չափազանցացնել պետութեան ազդեցութիւնը ժողովրդի տնտեսական կեանքի վրա և ոչ էլ անուշադիր թողնել այն հանգամանքը, որ պետութիւնը կարող է ազդել տնտեսական զարգացմանը: Ճառախօսը պահանջում էր, որ պետութիւնը իր հովանաւորութեան տակ առնէ բանւորներին: Աշխատանքը մի ապրանք է համարվում, բայց աղքատութիւնը ստիպում է բանւորներին այդ ապրանքը որքան կարելի է էժան վաճառել: Անհրաժեշտ է պաշտպանել բանւորների կեանքը, առողջութիւնը, ընտանիքը և կրօնական զարգացումը և բացի այդ ապահովել նրանց ծերութեան և դժբաղդութիւնների դէմ: Նա պահանջում էր, որ կանանց աշխատանքը գործարանների մէջ սահմանափակված լինի, իսկ մի քանակ բոյսստագը վճռեց կարգադրել, որ այդպիսի դէպքերում դատարանները կանցլերի միջնորդութեամբ յայտնեն բոյսստագին նրա անդամի կալանաւորութեան լուրը և պատճառները:

Ենթադրութիւն կայ, որ դարնանը գերմանական բոյսստագը կը քննէ հետևեալ երեք օրինագիծները. մշակների ապահովութիւնը, արդիւնաբերական գործունէութեան զարգացումը և ծխախոտի արտօնութեան մտցնելը: Իշխան Բիսմարկ յոյս ունի օգուտ քաղել մինչև անդամ բոյսստագի ընդդիմադրական կուսակցութեան կարծիքներից այդ օրինագիծների մասին, որովհետև պարլամենտական վիճաբանութիւնները կը նպաստեն այդ հարցերի մշակութեանը: Բոյսստագի նախագահը յայտնեց, որ ինքը Իշխան Բիսմարկից մի նամակ է ստացել, որով յայտնվում է, թէ կալանաւորված պատգամաւոր Դիտց յունվարի 14-ին արձակված է Շտուտգարտի բանտից:

Բոյսստագի նիստերից մէկի ժամանակ քննվեցաւ պատգամաւոր Հերտլինգենի հարցը գործարանական այժմեան օրէնքների զարգացման մասին: Իշխան Բիսմարկ պատրաստականութիւն յայտնեց անյապաղ պատասխանել այդ հարցին, որ Հերտլինգեն արտայայտեց մի երկար ճառով: Ճառախօսը մերժում էր թէ սօցիալական և թէ կոմունիստական պետութիւնը, նոյնպէս և այն վարդապետութիւնը, որ ամեն բան թողնում է իր բնական ընթացքին: Նրա կարծիքով, հարկաւոր չէ ոչ չափազանցացնել պետութեան ազդեցութիւնը ժողովրդի տնտեսական կեանքի վրա և ոչ էլ անուշադիր թողնել այն հանգամանքը, որ պետութիւնը կարող է ազդել տնտեսական զարգացմանը: Ճառախօսը պահանջում էր, որ պետութիւնը իր հովանաւորութեան տակ առնէ բանւորներին: Աշխատանքը մի ապրանք է համարվում, բայց աղքատութիւնը ստիպում է բանւորներին այդ ապրանքը որքան կարելի է էժան վաճառել: Անհրաժեշտ է պաշտպանել բանւորների կեանքը, առողջութիւնը, ընտանիքը և կրօնական զարգացումը և բացի այդ ապահովել նրանց ծերութեան և դժբաղդութիւնների դէմ: Նա պահանջում էր, որ կանանց աշխատանքը գործարանների մէջ սահմանափակված լինի, իսկ մի քա-

---

յի: Թիւրքիային ինչ գործ, որ Անգլիայի տեղ կը զօրեղանայ իր տերութեան մէջ մի ուրիշ «դեավուր» պետութիւն. դէթ կարելի լինի խափանել այն չարիքը, որը կախ է այժմ Թիւրքիայի գլխին «Հայաստանի բեֆօրմներ» անունով: Անտարակոյս այսպիսի մի volte-face դէպի Գերմանիան, պիտի արտադրէ նոյնպէս իր բացասական արդիւնքը, դայրացնելով Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը Թիւրքիայի դէմ, բայց բանը նորանումն է, որ հաստատում են թէ՝ այս երեք պետութիւններից մէկի կողմից էլ Թիւրքիան ապահովացրել է իր թիկունքը գաղտնի դաշնադրութեամբ...

Բայց եթէ ով իրօք հետաքրքիր է հայկական խնդրին, թող նա բարեհաճէ քիչ ուշադրութեան առնել, որ հայոց հարց ասված բանը ունէ երկու միապէս ծանրակշիռ և կարևոր կողմեր՝ արտաքին և ներքին. թէ որոնք են հայոց հարցի ներքին կողմերը—այդ այն խիստ ստիպողականապէս ձեռնարկելիք միջոցներն են, որոնց մասին արդէն խօսեցի մի անգամ «Մշակի» մէջ, այն է, ներքին նախապատրաստութիւնք, որոնցով պիտի շատ զգաղեցնեմ եկող տարվանից ռուսահայերի ուշադրութիւնը, հրաւիրելով նոցա նպաստել այն անելիքների յառաջացման, որոնց մեծապէս կարօտ է հայրենիքը, արտաքին զգալի բարեփոխմանց պատրաստ լինելու համար: Աշխարհս և բնութեան օրէնքը չէ կարելի փոխել՝ մի օրգանիզմ, որի ներսը կարգաւորված չէ, արտաքին խնամքներից նա չէ կարող կազդուրվել. հարկաւոր է վերջապէս ձեռք առնել այն նախապատրաստութիւնները, որոնցով պայմանաւորված է միայն և երաշխաւորված թիւրքայ հայ ժողովրդի հասարակային և քաղաքական վերականգնումը... քանի որ հարցի ներքին պահանջները արհամարհելով, մենք պիտի սպասենք միայն արտաքին աշխարհից եկող մխիթարիչ-հրեշտակին, վատ յոյս է այդ և չարաբաղդ ակնկալիք....

Ես ձեզ գրեցի արդէն թէ որչափ արթնացած են հիմայ և նախանձախնդիր իրանց ինքնուրոյն յառաջադիմութեան գաւառացի բոլոր հայերը, որոնց պլօգրամը մօտաւորապէս կայանում է նորա մէջ թէ հայրենիքի բոլոր կրօնաբաժան հայերը ձեռք ձեռքի տուած, պիտի գործ դնեն իրանց բոլոր ջանքերը, մի կողմից Հայաստանից դուրս պանդուխտ հայ չը թողելու համար, միւս կողմից էլ կարողացածին չափ հետամուտ լինել թուլացնել այն պատճառները, որոնք նպաստում են գաղթականութեան: Գաւառացի հայը, այսպիսով, գալիս է այն ամենագլխաւոր կէտին թէ՝ երբ միանգամ բոլոր հայերը համախմբված եղան հայրենիքի մէջ, էլ այդ օրից ոչ մի քաղաքական մեքենայութիւն, ոչ մի volte-face և դիվերսիա չեն կարող բնաւ խեղդել «հայրենիքի վերականգնումն» ասված այն ծնունդը, որի աճումը չէ կարող երբէք արագ և նորմալ լինել, քանի որ նորա դայեակը և հողատարը չի լինի ինքը հայ ժողովուրդը և այդ ժողովրդի ազգային գիտակցութիւնը....

Գիտեմ որ Ներսէսի հրաժարականի խնդիրը հասասարապէս զբաղում է և ձեր ընթերցողներին, մանաւանդ այսպիսի մի ժամանակ, երբ համատարած հայութեան սիրտը բաբախում է մի և նոյն արտօրանքով և անհամբերութեամբ իրանց հայրենիքի վիճակի որոշման մասին: Ներսէսի հրաժարականը մնացած է դեռ մի և նոյն անշարժութեան մէջ, որովհետև մի կողմից սուլթանին անյարմար է, ըստ երևութին, այնչափ զիջանիլ, որ պատրիարքի հրաժարականը չընդունելով կարելի լինի ընդունել նրա դրած պայմանները. ուրիշ կողմից էլ պատրիարքը չէ կարող կատարել սուլթանի կամքը, յետ առնելով իր հրաժարականը, առանց ո և է գրաւականի հայոց հարցը կարգադրելու համար: Այսպիսով որչափ էլ տեսակցում են զանազան նախարարներ պատրիարքի հետ, լոկ դարդակ և անուղղակի խոստումներով նորան յետ համոզելու համար իր դիտաւորութիւնից, որչափ էլ վազվզում են պատրիարքի մօտ սուլթանի յատուկ ադիւտանտները «վեհափառ» թագաւորի «սրտագին» սեղեամները մատուցանելու համար, բայց Ներսէսը մնացած է անդրդրդ և անսասան: Կարծիք չը կայ, որ եթէ հէնց մի վայրկեան կարելի լինէր հեռացնել հայոց պատրիարքը իր պաշտօնից, առանց մեծամեծ յուզմունք հանելու ժողովրդի մէջ, առանց եւրոպական դեսպանների տհաճութիւնը գրգռելու, հաստատած լինէք, որ այդ ժամանակ ոչ թէ նախարարներ և յատուկ ադիւտանտներ կուղարկվէին դեավուրների «որ և է փափաղ» մօտ, այլ մի հասարակ չօվուշ (унтеръ-офицеръ) անգամ չէր յոգնի սուլթանի ստորագրած հրաժարացման ֆիրմանը այդ «վատ փափաղին» յանձնելու համար...

Մինչդեռ շատ զգուշութիւն է հարկաւոր բանցնել հիմայ մանաւանդ նորա համար, որ ոչ չափ էլ Թիւրքիան աշխատում է խեղդել հայ ժողովրդի ո և է հաւաքական շարժման նշանները «Հայաստան» ասված իր ստելի երկրի մէջ, այնչափ էլ Ներսէսի հրաժարականի պատճառաւ այդ երկրի ժողովուրդը աւելի է արտայայտում կենդանութեան և միաբանութեան նշան, Հայաստանի զանազան անկիւններից բազմաթիւ հեռագիրներում իր ազգու «Veto-ն» ուղարկելով պատրիարքարանի Ներսէսի հրաժարացման պատճառաւ: Այսպիսի փոխանակ իր մեքենայութեանց «բարի արդիւնքը» տեսնելու, Թիւրքիան հասնում է միայն այն չնաշարադ արդիւնքին, որ հայոց հարցն էլ զուրգալով «սեղլոմների սեփական երևակայութիւնից» (ինչպէս միշտ աշխատել է այդպէս հանդիսանալ Եւրոպային Թիւրքիան), դառնում է հիմնադրել Եւրոպային Թիւրքիան ժողովրդի իրան յատուկ սեփականութիւնը: Դժուար չէ դուշակել թէ որչափ կատաղութիւնի պիտի պատճառէ Թիւրքիային գործերի մի այսպիսի կերպարանք ստանալը, որովհետև եթէ սկզբում հայոց հարցը յիրաւի էլ լինէր լոկ հայ ժողովրդի միայն զարգացած մասի հարց, այնուհանդերձ նա եղած է բուն ժողովրդային մի խնդիր, որի խեղդելը էլ անհնարին է, քանի որ այդ ժողովուրդը հաշվում է իր մէջ հինգ միլիոն անդամներ, սկսած ի հարկէ հայրենիքի կենտրոնից. այսպիսի է այն օրհասական հետևանքը, որին հասցնում է Թիւրքիան վերջ ի վերջոյ: Նա, ինչպէս երևում է, ապշած է մնացել հիմայ հայ ժողովրդի այսպիսի մի դեռ չը տեսած համերաշխութեան վրա, որ հետև Զմիւռնիայից սկսած մինչև Փոքր և Մ

նի տեսակ գործարաններում կատարելապէս արգելվի։ Նրա կարծիքով, գործարանների մէջ գիշերային աշխատանքները պէտք է կատարելապէս արգելել և օրվայ աշխատանքը սահմանափակել տասը ժամով։ Բանւորի վրա պէտք է նայել ինչպէս մարդու վրա և ոչ թէ ինչպէս գործարանատիրոջ հարստանալու գործիքի վրա։ Ճառախօսը յոյս ունի, որ նրա բարձրացրած հարցերը անյապաղ կը քննվեն։ Իշխան Բիսմարկ պատասխանեց. „Ես եմ կարծում, որ այդ կարելի լինի։ Ճառախօսի նպատակներին կարելի է հասնել ուրիշ կերպ, եթէ ոչ ընկերական սկզբունքների օգնութեամբ, իսկ այդ գործը գոնեա մի տարվայ աշխատանք է պահանջում։ Առաջին միջոցը մասնագիտական ստատիստիկան է։ Ես չեմ կարող վերջնականապէս որոշել սոցիալ-քաղաքական նախագիծների վերջնական նպատակները, որովհետև այդ հարցի վերաբերութեամբ կայսրը և միացեալ կառավարութիւնները վերջնական վճիռ չեն կայացրել։ Ինչ կը վերաբերի բանւորների ապահովութեանը դժբաղդ դէպքերի դէմ, ես այն համոզմունքի եմ, որ այդ ցանկութիւնը կարելի է իրագործել միմիայն ընկերակցական միջոցներով։ Անհրաժեշտ է բաժանել աշխատանքը և հեռաքրքրված անձանց մասնակից անել այդ աշխատանքներին։ Վերջին ընտրութիւնների հետևանքները ըստիպեցին ինձ կասկածել սոցիալական վերանորոգութիւնների աջողութիւնը։ Արդիւնաբերական շրջանների մէջ բանւորները ցանկութիւն յայտնեցին, որ կառավարութիւնը այդ վերանորոգութիւնների սկզբնապատճառ չը դառնայ։ Նրանք մերժեցին կառավարութեան օգնութիւնը, մեծ բարիքների սպասելով առաջադէմներից։ Մինչդեռ կայսերական կամքը կատարելու համար իմ պաշտպանած ձևի նպատակն է որքան կարելի է սահմանափակել այն մարդկերանց թիւը, որոնք իրաւունք ունեն ասել. „մենք բաւականութիւն ենք տալիս պետութեան պէտքերին, մինչդեռ պետութիւնը մեր մասին չէ հոգում։“ Այդ ձևը աւանդական է այն թագաւորական տանը, որին ես ծառայում եմ։ Կայսրը ցանկանում է շարժում յարուցանել յօգուտ ազգաբնակութեան չքաւոր դասերի։ Եթէ ժողովը չէ կամենում ընդունել կառավարական առաջարկութիւնները, թող ուղղակի յայտնէ։ Թող ամենքին յայտնի լինի, որ ես իմ պարտականութիւնը կատարել եմ։ Ինչ կը վերաբերի առաջարկած հարցին, ինքս քրիստոնեայ լինելով, անկասկած պարտականութիւն եմ համարում դործնականապէս պաշտպանել քրիստոնէութիւնը։ Բայց պէտք է 'ի նկատի առնել, որ չէ կարելի սպանել իր ձուաներով բանւորներին կերակրող „հաւին։“ Վճռելով կիրակի օրերի հանգստութեան, կանանց աշխատանքի և առհասարակ աշխատանքի սահմանափակման հարցերը, անհրաժեշտ է 'ի նկատի առնել և գործարանատերերի շահերը։ Այդ հարցերը անկարելի է վճռել, մինչև նրանք ընկերակցական հիմունքներ չեն ունենայ։ Գործարանների տեսուչները պէտք է օգնութիւն ստանան բանւորներից և մի նոյն ժամանակ բանւորների ընկերութեան հոկողութեան տակ լինեն։ Այն ժամանակ միայն թոյլերը կը զգան, որ նրանք վայելում են պետութեան հովանաւորութիւնը և պաշտպանութիւնը։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դաւրէժ, 15 դեկտեմ.

Անցած նոյեմբեր ամսի 20-ին տեղի ունեցաւ առաջնորդարանում Դաւրիժու ընթերցարանական ընկերութեան նիստը, ուր ներկայացվեցաւ նրա միամեայ գործունէութեան ելևմտական հաշիւը։ Հանդիսին ներկայ էին ընկերութեան բոլոր անդամները և դրսից հրաւիրված էին հասարակութիւնից մի քանի անձինք ևս։ Հաշվից երևեցաւ, որ ընթերցարանը այսքան տարվայ ընթացքում մինչև նոյն ժողովի օրը յետ դցած փող է ունեցել, բոլոր ծախքերը հանելուց յետոյ՝ 157 թուման կամ մօտաւորապէս 500 ռուբլ թղթադրամ, որը ընթերցարանական վարչութիւնը յանձնել է ազգային Արամեան դպրանոցի հոգաբարձութեան։ Այդ փողերը նոյն հոգաբարձութիւնը ծախսել է մի նոր ընթերցարանական շինութեան վրա, որ արդէն պատրաստ է և շատ նպատակայարմար։ Այստեղ անհրաժեշտ հարկաւոր է յիշել, որ պատուելի հոգաբարձութիւնը ընթերցարանի շէնքի համար բացի այն վերոյիշեալ գումարը՝ իր ծանօթ աղբիւրներից ծախսել է և 1,000 ռուբլուց աւելի։

Ընթերցարանի անցեալ տարվայ տարեկան բաժանորդագինը 3 ռուբլ է եղել. իսկ այս անհնարագինը չը կարողանալով հոգալ ընթերցարանի բոլոր կարևոր և էական պիտոյքները՝ ժողովը ձայնից առաւելութեամբ սահմանեց տարեկան բաժանորդագինը 15 զրան, որ և հաստատեցաւ։ Ա. այժմ 30-ից աւելի բաժանորդներ կան և յուսալի է, որ թիւը մինչև 50-ի հասնի, որովհետև համակրողներ գտնվում են։ Ժողովը ընթերցարանի վարչութեան համար ընտրեց մի նոր տեսչութիւն։

Տեսուչ ընթերցարանի՝ Կ. Տէր-Աստուածատրեանց
Առենադպիր ընթերցարանի Ա. Աֆթանդիլեանց
Գանձապահ ընթերցարանի Գ. Շահնազարեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Փարիզի «Temps» լրագրին Լոնդոնից հեռագրում են, յունվարի 16-ից, որ լորդ Գրէնվիլ Լոնդոն վերադառնալուց յետոյ, Կ. Պօլսի անգլիական դեսպան լորդ Դիւֆէրինից մի հեռագիր ստացաւ, որի մէջ դեսպանը գրում էր, թէ իր տեսակցութիւնը սուլթանի հետ բարեյաջող հետևանք ունեցաւ։ Խօսվում էր զբաղարապէս այն վերանորոգութիւնների մասին, որոնք պէտք է մտցնվեն Հայաստանի մէջ։ Սուլթանը, իբր թէ, այդ առարկայի վերաբերութեամբ բոլորովին վճռական խոստմունքներ տուեց։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 15 յունվարի։ Գամբետտա և մինիստրները երէկ ներկայացրին նախագահ Գրեվիին իրանց հրաժարականները։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ Կօխանօվի մասնաժողովը յանձնեց Մեժօվին յօդուածների ժողովածու զեմստվօների և նահանգական հիմնարկութիւնների մասին։ Եկատերինբուրգի մէջ վաճառական Պետրով կատկեց 400,000 ռուբլ որբանոցի հիմնարկութեանը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յունվարի։ Լրագիրները յունվարի 16-ին հաղորդում են. հալածելով զեղծումները Իշխան Սվիատօպոլկ Միրսկի Դօնսկայա նահանգի մէջ շատ անձանց հրաժարեցրեց պաշտօնից։ Յունվարի 15-ին նա հասաւ Ս. Պետերբուրգ։ Մի մասնաժողով է հիմնված իւնկերների ուսումնարանները վերաքննելու համար։ Շվեյցարիայի մէջ վախճանվեցաւ „Русское Слово“ լրագրի աշխատակից, Արևելքի պատմութեան հեղինակ, գրող Զայցեվ։ Հարաւային քարածուխի արդիւնաբերողները կազմում են ընկերութիւն վնասված բանւորներին օգնելու համար։ Միջոցները կը կազմեն հանքերից հաւաքված տօկօսներ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ռ. 87 կ., երկրորդ 91 ռ. 50 կ., երրորդ 92 ռ., չորրորդ 91 ռ. 50 կ., հինգերորդ 90 ռ. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 216 ռ., երկրորդ 215 ռ. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ. 50 կ., երկրորդ 89 ռ. 87 կ., երրորդ 89 ռ. 87 կ., ոսկի 8 ռ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,43 պէնս, Ամստերդամի 124,25 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 208 մարկ, Փարիզի վրա 256 ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը շատ թոյլ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի։ Յունվարի 26-ին Խարկովի մէջ կը սկսվի քաղաքական դատաստանական մեծ գործ։ Խարկովի նահանգում ձմեռվայ ցանքերը ոչնչացան, զեմստվօն մտադիր է այդ տեղերում գարնանային ցանք անել, որին բդեղը վնասել չէ կարող։ Կօնտրօլը առանձին հսկողութիւն նշանակեց երկաթուղիների վեց գծերի վրա, ի միջի այլոց Կուրսկո-Ազովսկայա և Լազարև-Սեվաստօպօլսկայա գծերի վրա։ Հեծելաղօրքերի մասնաժողովը մշակեց վեց եսկադրօնների գունդերի նախագիծ։ Սպասում են, որ Տերսկայա և Կուբանսկայա նահանգների պետական կալուածների համար առանձին վարչութիւն կը նշանակվի։ Յունվարի 19-ին մինիստրների խորհուրդ կը կայանայ Կովկասի քաղաքական մասի գլխաւոր կառավարչի իրաւունքների մասին։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

ԲԱԳՈՒ. Յովհաննէս Արաքելովին։ Երբ անցեալ տարի ստացանք ձեզանից 31 ռուբլ, որպէս զի հասցնենք Մեղրի, հրդեհից վնասվածներին, յայտնեցինք որ այդ տեսակ հանգանակութիւն չենք ընդունում և յետ կուղարկենք ձեզ փողերը։ Եւ ճշմարիտ դեռ նոյեմբեր ամսի 23-ին յետ ուղարկեցինք ձեր անունով այդ 31 ռուբլ Բագու, որի համար և ունենք փոստից ստացած մի անդորրագիր։ Հարցրէք փոստում։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հայաստան յուզմունքի մէջ է Ներսէսի հրաժարականի պատճառաւ. այն էլ, երևակայեցէք, բոլոր կրօնաբաժան համարիւնները միացած ազգային ընդհանուր հարցի մէջ այնպէս, որ կարծես երկնքից Աստուած մի յատուկ պատգամաւոր է ուղարկել բոլորին մի միտք և մի խորհուրդ ներշնչելու համար։

Այսպիսի մի մեծ և նշանաւոր արդիւնքի վրա, խնդրում եմ, լաւ ուշադրութիւն դարձնէք, որովհետև որչափ էլ մէկ տարի կամ երկու տարի առաջ հայ անհատներ աղմուկ յարուցանէին օտար լրագիրների մէջ հայկական հարցի վրա, բայց այդ անհատները իրանց սրտի մէջ մի՞շտ մի առանձին երկիւղ և վիշտ էին կրում հայ ժողովրդի մեծամասնութեան և ընդհանրութեան չափից դուրս մեծ թմրութիւնից և անպատրաստութիւնից բուն Հայաստանի մէջ. մինչդեռ այդպիսի մի բանաւոր երկիւղ այսօր էլ տեղիք չէ կարող ունենալ հայ հայրենասիրի սրտում, ինչպէս որ դուրս ուրախալից և հանդիսաւոր ապացոյցները տեսնում ենք հիմայ Ներսէսի հրաժարականի պատճառաւ։ Առանց չափազանցութեան և ծայրայեղութեան մէջ ընկնելու կարող եմ ասել ձեզ հիմայ, որ այսուհետև է միայն սկսվում բուն հայկական հարցը, որը էլ չէ կարող ոչ մարմնանալ որ պատրիարքի ուղէ լինի անձնաւորութեան, որ անհատականի լինի հեղինակութեան մէջ. ահա ժողովրդի այսպիսի մի աստիճանաւոր պատրաստութեան մենք պարտական ենք ոչ ուրիշ մէկին բացի Ներսէսից, որը այս երկք տարվայ մէջ իր խելքով և հմտութեամբ այնչափ կարողացաւ պատրաստել Հայաստանի քրիստոնեայ բնակութիւնը, որ այսօր նա կոլմնակի կերպով Թիւրքիայի հետ երես առ երես դուրս գալով, տէր է կանգնում իր սեփական իրաւունքներին. որովհետև «Veto» տալով Հայաստանից ուղղակի պատրիարքարան, հայ ժողովուրդը այդ «Veto»-ն Թիւրքիային է տալիս իր սիրած պատրիարքի և իր իրաւունքների համար։ Չէնց այսչափը, կրկնում եմ, շատ բան է, եթէ Ներսէսը ոչինչ էլ աւելի չը կարողանայ անել և հրաժարվի պատրիարքութիւնից։

Երբ մի անգամ Հայաստան տված բառը սոսկ «մեռած յիշատակներից» և «աշխարհագրական տերմիններից» փոխվում է Եւրօպայի առաջ մի այնպիսի երկիր, որի մէջ բացի այդ «մեռեալ յիշատակներից» կայ և կենդանի ժողովրդի միահամուռ ձայն և կամք, ահա այդ օրից միայն «Արմենիա» ասելով կը հասկացվի միայն Արմենիա, այդ բառի բուն մտքով, այլ էլ ոչ Քիւրդիստան և ոչ Անատօլիա. այդ օրից միայն Թիւրքիայի հայերը կարող են վստահ կերպով արտասանել իրանց հայրենիքի անունը, այդ օրից միայն նոքա կարող են կենդանի հաւատ ունենալ իրանց ապագայի վրա...

Բայց ինչպէս գրեցի ձեզ անցեալ անգամ, բնաւ հարկաւոր չէ բաւականանալ միայն հարցի լոկ արտաքին և քաղաքական դրութեամբ, այլ հարկաւոր է այժմ բոլոր մեր ուշադրութիւնը դարձնել հայ ժողովրդի ներքին կացութիւնը և արթնութիւնը ամրապնդելու վրա։ Հարկաւոր է ամեն կողմից զանազան մեր օժանդակութիւններով ամրացնել այդ դարևոր մրափից վերթռած ժողովրդի դիցմունքին. հարկաւոր է հիմայ արագաշուտ օգնութեան հասնել նորան, աշխատելով հոգալ այն նորա բազմաթիւ պիտոյքները, որոնք վերաբերվում են ժողովրդի գոյութեան և կեանքի ամենաէական կէտին, այն է նորա նիւթական և տնտեսական պահանջներին։ Այս պահանջները, փառք Աստուծոյ, մեզնից ոչ արիւն են ուզում և ոչ կեանք, որ սարսինք ու հետ մղվենք, այլ մեզնից լոկ մեր աւելորդ դրամների մի փշրանքներն են ուզում, որոնցով կարելի լինի ուղարկել Հայաստան մի քանի արուեստագէտ մարդիկ, մի քանի փաստաբաններ, օրինագրքեր և այլն, իսկ ամենից առաջ աշխատել ժողովել մայրաքաղաքներից այն հարիւրհազարաւոր թափառական գիւղացիները, որոնք բեռնակրութեան համար Հայաստանից դուրս են եկել, բայց դանազան փոքրիկ պարտքերով կաշկանդված մնացել են այս տեղեր, ցեխի և աղբի մէջ խրված։ Ես արդէն մի քանի անգամ կրկնեցի, թէ այս հարցը շատ կարևոր հարց է, որին պիտի անյապաղ նուիրէ հայ ազգը իր բոլոր ուշադրութիւնը, եթէ միայն այդ ազգը համոզված է, թէ ազգի վերականգնումը դեռ ոչ մի պատմութեան էջերում առանց դրամի, այլ միայն քամի փչելով չէ եղած... Դարձեալ կրկնում եմ, որ բեռնակիրները հայրենիք ուղարկելու հարցը շատ ծանր և բովանդակաւոր հարց է, որի բացատրութիւններով շատ պիտի զբաղեմ եկող տարուց մեր ընթերցողներին, միանգամայն ձեռք չը վերցնելով նոցանից մինչև այն ժամանակ, երբ նոքա կը սկսեն հետամուտ լինել իրանց այս մեծ ազգային պարտաւորութեան, որի վրա սակայն բնաւ չէ կարելի յոյս դնել Կ. Պօլսի հայերի օգնութեամբ լուծելու վերաբերմամբ։

Յատուկ պարտաւորութիւն են դրած ինձ վրա խուռնավիլցի հայ բեռնակիրները իրանց սրտագին շնորհակալութիւնը յայտնել Մշակի միջոցով պ. պ. Սմբատ Շահ-Ազիզին և Միքայէլ Սաղաթելեանցին, նոցա նուիրած գրքերի համար. այդ գրքերը չեն կարդացվում, այլ կլանվում են այստեղի բեռնակիրներից, որոնք իրանք կարդալուց յետ իսկոյն կուղարկեն այդ գրքերը Հայաստան։ Պ. Շահ-Ազիզի նուիրատուութիւնը իր բոլոր աշխատութեանց հանում է հարիւր ռուբլուն. փառք և պատիւ այդպիսի վաստակաւորներին։

Աւելորդ չեմ համարում յայտնել ձեզ հետևեալ հետաքրքիր և սրտաշարժ դէպքը խուռնավիլցի բեռնակիրներից տեսած. իմ արած միջնորդութիւնը ռուսահայերի առաջ որոշելով իրանց մէջ անպատճառ որ և է մի բանով վարձատրել, իրանցից գիշերվայ պահապան են դրել այն փողոցի վրա, ուր ես հիմայ բնակվում եմ։ Որովհետև գիշերվայ պահապան դնելը ամեն փողոցներում սովորութիւն է այստեղ, վասն որոյ իրանք իրանց մէջ որոշելով, գնացել են պօլիցիայի թաղապետից խնդրել, որ իրանց ուղած փողոցից վերցնէ թուրքէէքչին (պահապանը) և նրա տեղը իրաւունք տայ իրանց ձրիապէս գիշերը հսկելու համար. ինչ պիտի անէք բնութեան այսպիսի անմեղ և առաքինի զաւակների հետ, որոնց մէջ է սակայն մեր բոլոր ապագան....

Գրիգոր Նիկողոսեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ԶԱՏԻԿ գլխարկներ 1 ր., ֆուֆայկաներ 2 ր. 75 կ., բրիւկներ 4 ր., բիջակներ 8 ր. ամբողջ հագուստ 13—19 ր., դրապ, մահուդ, տրիկո, սրբիչներ և ալբոմներ կէս գնով։ Հնդկական բրինձ 6 կ., սագօ և պերլովայա կրուպա 9 կ., պանիր չեստեր 70 կ., նշշատայ կօլմանի 18 կ. ֆունտը, լուծողական ձեթի պիլիւլներ 2 կ., լուացքի փոշի 5 կ։ **ՆՈՐՈՒԹԻՒՆ**։ Մեղրամոմ և արծաթէ մոմեր 35 և 42 կ. ֆունտը։ Մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական մահճակալներ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն երեխաների համար 4 ր., մեծերի համար 12 ռուբլուց։ **ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ**։

2—36

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 ր., ծըծողներ 1 ր ծալվող աթոռներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱԹՈՌ 4 ր., ԲԱՋԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 ռուբլ և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի ման քորոցներ 50 կ., պաստելա ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բամազէյ 1 ր.—1 ր. 30 կ., պարուսինա 40 կ.—1 ր., 300 հատ ըէվոլվեր 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 -ֆունտ թէյ ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.։ եր -կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար։ Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։

72—100

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% **ԷԺԱՆ** քան թէ ուրիշ տեղ. ԹԷՑ, կակաօ, ՇՕԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սուրօկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԶԳԵՍՏԱԿԱԽՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻԶՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէօնկա, ԹԱՄԲԵՐ, սանձեր, ուլթներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսսրբիչներ, թաշկինակներ, կանանց գուլբաներ, մարդկերանց գուլբաներ, տուալետի սապոն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կոնիակ և 1,000 այլ առարկաներ։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ՆՈՅՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախվում է **ԹԷՅ**. պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ։

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՉՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., ըէվոլվերներ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, ալբոմներ կիսագնով, ֆիլտրաներ և այլն։ Ամենամեծ պահեստ հրացանների և ըէվոլվերների Թիֆլիսում։

82—100

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

„ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ“

Այս ֆիրմայով բանալով Երևանումն գրավաճառանոց՝ կցելով նորա հետ ուսումնարանական, դիւանական, նկարչական և կազմարարական իրեղէնների խանութ, յանձն ես առնում տալ միշտ յիշեալ ապրանքներից Երևանի և նորա շրջակայ քաղաքների և գիւղերի դիւանատներին և ուսումնարաններին շատ ձեռնտու գներով և պայմաններով։

Ընդունում եմ տպագրել տալու բլանկներ, ծանուցագրեր, յայտարարութիւններ, այցետոմներ, բրօշիւրներ, նաև գրքեր, ամենաարժան վարձով։

Ինձ մօտ է գտանվում իմ հրատարակած „Ցնային բժշկական մարմնամարզութեան“ գրքոյկի պահեստը։

Իմ հասցէն. г. Эривань. Н. Симеонянцу, магазинъ. „Другъ-Дѣтей“.

ԱՐԴԷՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ռուսաց յայտնի գրող **ՎՈՒՉԵՏԻՉԻ** „ДВѢ ЕЛКИ“ մանկական գրքուկի հայերէն թարգմանութիւնը „**ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ**“ անունով։

Այս գրքոյկը ընդունել էր տպագրելու Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը. բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ տպագրելու։ Տպագրված է շատ ընտիր թղթի վերայ խոշոր տառերով։

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ։

Կարելի է ստանալ թէ՛ կենտրոնական գրավաճառանոցից և թէ՛ թարգմանողից՝ հետևեալ հասցէով.

Тифлисъ—на Авлабаръ Ивану Петровичу *Назаріанцъ.*

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կոպէքներ 15 կ. հատը, 10,000 ասեղ 8—40 կ. հարիւրը, 10,000 պինդներ 5 կ., 5,000 շիշ պօրտվէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մատիտներ և զրչակոթեր 8 կ. դիւժինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական ըէվոլվերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկո, ալբոմներ, ձմեռվայ պալտօներ, գլխարկներ, վարտիկներ, հագուստ կէսգնով։ Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։ Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուդը 2 ր. 50 կ.։

38—60

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻԼՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը և վրձին գլխաչափի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

67—100

Կովկասեան դպրոցաց հոգաբարձուներին շատերը՝ մեր հրատարակութիւններն և դասագրքերը ձեռք բերելու համար միշտ մեզի Ռոստով (Դոնի վերայ) քաղաքը դիմելով և ճանապարհի համար աւելի ծախք վճարելով, նոցա դիւրութեան համար հարկաւոր համարեցինք յայտնել, որ այն գրքերը կարող են ստանալ նաև մեր եղբօրից, որոյ հասցէն է. *Тифлисъ*, Григорію Абрамовичу Теръ-Абраміанъ, Ольгинская улица, д. № 3.

	ր.	կ.
Իսկ նորա մօտ գտնուած գրքերը սոքա են.		
ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ՆՈՐ, 75 վիմատիպ պատկերներով	—	15
ԲԱՆԱԼԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ռուս լեզուի.	—	50
ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն. . . .	—	50
ԸՆԹԵՐՑԱՐԱՆ բարոյական ուսմանց, ազգային գիտելեաց և զուարճալի պատմութեանց	1	—
ԸՆՏԻՐ ԱՌԱԿՆԵՐ Եզովպոսի և Քռիլովի հանդերձ բարոյական խորհրդածութեամբք, 20 վիմատիպ պատկերներով	—	60
ԺԼԱՏ, կատակերգութիւն 3 արարվածով	—	30
ԹԵԳԱՐԱՆ, որ է „կանոն սաղմոս“	—	5
ՅՈՎՍԷՓ Դ. կենսագրութիւն հանդերձ պատկերաւն. . . .	—	25
ՆԵՐՍԷՍ Ե. կենսագրութիւն հանդերձ պատկերաւն. . . .	—	25
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՐԻՄՈՒ (սակաւագիւտ).	1	—
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, երրորդ տիպ. 24 վիմատիպ պատկերներով. .	1	—

Բազմաթիւ օրինակներ գնողներուն նոյն զիջումը կը լինի, ինչ որ տպուած է մեր 1882 թուականի օրացուցին մէջ։

Տէր տպարանի և վիմագրատան ՅՈՎՀ. ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

(Հ. շ.) 4—8

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կատոլիկոս փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

127—150

Կովկասեան հասարակական խնամատարութեան Պրիկազից յայտնվում է, որ պրիկազի վարչութեան մէջ 1882 թուի յունվարի 21-ին նշանակված է ամուրդ կրկնաձուրդով երեք օրից յետոյ, այսինքն նոյն ամսի 25-ին 1882 թուին Թիֆլիսի հիւանդանոցին, աղքատանոցին և ֆելշարների ուսումնարանին հետևեալ մթերքները հասցնելու համար. 1) Թխած հաց դրսից բերված 1-ին տեսակի ցորենի ալիւրից առանց խառնուրդի 912 պուդ 20 ֆունտ, 2) Թխած հաց տեղական 1-ին տեսակի ալիւրից լաւ թխած առանց խառնուրդի 2404 պ. $17^1/_2$ ֆ., 3) նոյն հացը երկրորդ տեսակի 1802 պ. $7^1/_2$ ֆ., 4) տաւարի միս ֆիլէի և ետևի մասը առանց արտալի թարմ, առողջ և մեծ կենդանիներից առանց եղը հանելու 2347 պ., 5) ոչխարի թարմ միս նախկին օրը մորթած և լաւ կերակրած 129 պ. 35 ֆ., 6) մաքուր աղ սպիտակ քարերով 236 պ. $7^1/_2$ ֆ., 7) կըրուպա 1-ին տեսակի չոր, մաքուր, առանց աւազի, աղբի և ալիւրի ա) մանի 247 պ. 16 ֆ., բ) սարօչինսկայա 859 պ. 8 ֆ., գ) պերլովի 159 պ. 8 ֆ., դ) գրեչնեվայա 188 պ. $8^1/_2$ ֆ., 8) կանաչեղէն և բանջարներ ա) կարտոֆել լաւ, չը սառած, չը փթած, մեծեր 881 պ. $31^1/_2$ ֆ., բ) սոխ ցամաք և չը փթած 90 պ. 6 ֆ., հ) մարկով առանց կանաչի և աւազի 48 պ. 6 ֆ., դ) ճաբխալ մեծեր և չը փտած 138 պ. 35 ֆ., ե) կաղամբ տարվայ եղանակներին ամառը և աշունքին թարմ, առանց արմատի և վերևի տերևի, իսկ ձմեռը թթու չը սառած և սպիտակ 206 պ. 35 ֆ., զ) ճակնդեղ և կարսօն 102 պ., է) պօմադօր 48 պ. $6^1/_2$ ֆ., ը) դաբնեայ տերևներ 4 պ. 30 ֆ., թ) պղպեղ 35 ֆունտ, 9) տաւարի հալած իւղ մաքուր, առանց խառնուրդի 109 պ. $7^1/_2$ ֆ., 10) ցորենի ալիւր առաջին տեսակի մաղած ամենալաւը 148 պ. 4 ֆ., 11) շաքար բաֆինադ ցամաք, մաքուր առանց խառնուրդի, քաշը առանց թղթի 197 պ. 28 ֆ., 12) կենդանի հաւեր չաղացրած 1460 հատ, 13) կախեթու գինի ոչ թթու, համեղ առանց խառնուրդի 11100 ֆունտ, 14) արաղ հացի 140 ֆ., 15) մրգեր օրապահ բժշկի և հիւանդների համար իբրև առանձին բաժիններ ամառը թարմ, իսկ ձմեռը չոր 10 պ., 16) կիտրոններ թարմ 700 հատ, 17) հաւի ձուներ 10000, 18) սապօն 1-ին տեսակի չոր" և կտրատած 108 պ. 1 ֆ., 19) խոտ մաքուր և փափուկ 2340 պուդ, 20) խոտ ձիաների համար, չոր առանց խառնուրդի լաւը $547^1/_2$ պուդ, 21) մաքուր գարի 371 պուդ $16^1/_2$ ֆունտ, 22) միակտոր փայտ կաղնի չինարի $^3/_4$ արշին երկարութեամբ։ Փայտը պէտք է լինի չոր, հաստ և պէտք է դարսվի այն սաժէնի օրինակով, որ կայ հիւանդանոցի բաղում 1716 սաժէն, 23) ֆօտոգեն առաջին տեսակի 683 պ. 38 ֆ., 24) մոմեր ստեարինի 15 պ. $16^1/_2$ ֆ., 25) իւղի մոմ 38 պ. $12^1/_2$ ֆ., 26) կաթը սերը չը հանած, թարը, չը թրթված առանց խառնուրդի 13,750 ֆ., 27) հանքային ջրեր ֆունտանոց սիֆոններով 2,000 ֆունտ, 28) սպիտակ թել չը փտած 3 պ., 29) սուխարներ լաւ չորացած և լաւ բուլկիներից 12 պ., 30) քիշմիշ 7 պ. 15 ֆ., 31) վերմիշել 7 պ. 20 ֆ., 32) ածուխ 12 բեռը։

Աճուրդ կարող է լինել բոլոր առարկաների համար միանգամից և առանձին։ Աճուրդը բերանացի կը լինի, բայց օրէնքի համեմատ ընդունվում են և ծրարներ։ Ն կ ա տ. Աճուրդին մասնակցողները պէտք է ներկայացնեն հաստատ գրաւական դումարի $^1/_3$ մասի, որ կամ կրեդիտի տոմսակներով պէտք է լինեն կամ քաղաքային անշարժ կայքեր, բացի այդ պէտք է ներկայացնել դիւղական վկայականներ։

Եթէ կապալառուն կը ցանկանայ կապալի դումարի հաշուում առաջուց փող ստանալ նրան կը տրվի դումարի կէսը գրաւականով ռուբլուն ռուբլ արժէքթղթերով, որ պէտք է կապալառուն ներկայացնէ բացի վերոյիշեալ գրաւականից։

Ցանկացողները վերցնել այդ կապալը Պրիկազի մէջ կարող են տեսնել պայմանները ամեն օր 9—2 ժամը, բացի տօն օրերից։

2—3

Дозволено цензурою, Тифлисъ 18 Января 1882 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.